

ՀԱՅՈՒՄԷ ԱՄԵՆԱՕԳՏԱԿԱՐ ՄԷԿ ԳԻՒՏԸ

Սպանիական իւրիշխոս թերթը ամբողջ սիրենք նուիրած է հայու մը, Գ. Մեծատուրեանի մէկ գիւտին : Գ. Մեծատուրեան ագարակային ճարտարագէտ (ingegnere agronomo) եթէ ոչ միակ, գէթ այն շատ սակաւաթիւ հայերէն է որոնք իրենց գործելու ասպարէզ Սպանիոյ մէջ գնացեր են փնտռելու :

Իր հնարած գիւտն է նոր դրութիւն աւաստուններու նշաններուն (Nuovo sistema di marche pel bestiame). Դրութիւնը կը կայանայ պարզ բանալիի մը մէջ որով տասնորդական թուարկումը կըրնայ նշանակել, այլազան է միակ նշանով մը ո՛ր է թիւ, կամ ո՛ր է է նշան : — Դրութիւնը այն աստիճան կատարեալ է, որ ոչ միայն հնարաւոր է նշաններու մէջ տարբերութիւն դնել, այլ անով կըրնայ նաև նշանակուիլ շատ որոշ կերպով ուսկէ կու գայ անասունը (նահանգ, զաւառ, դաշտն ու տեղը) տէրը և ուրիշ ինչ

որ կարելոր է մատակարարութեան համար :

Գ. Մեծատուրեան իր գիւտին զաղտնիքը դեռ բոլորովին չէ հրապարակած. բայց բազմաթիւ փորձեր կատարած է ձեռնհաս անձանց առջեւ որոնք ամէնքն ալ վկայութիւն տուած են գիւտին յաջողութեան, յայտնելով միանգամայն թէ այս կենսական խնդրին լուծումը, այսքան պարզ միջոցով ու նշաններով, մեծ կարեւորութիւն ունի ոչ միայն տէրութեան համար այլ մանաւանդ ժողովրդեան, գիւտ մը որ հըշմարիտ օգուտ մըն է հասարակաց և որ մեծ բարիք պիտի բերէ բոլոր երկիրներուն, մանաւանդ անոնց, ինչպէս Սպանիոյ, որոնց բերքի հիմնական մէկ աղբիւրն ալ անասնադամանութիւնն է :

Շնորհաւորելի է Գ. Մեծատուրեան իր գտած մեծ յաջողութեան համար, պանծացնելով հայ անունը երկրի մը մէջ, ուր այնքան ճանչցուած չէ :

Ա. Զ. Դ

Խմբագրութիւնն նկատի առնելով այն համակրական ու ջերմ ընդունելութիւնը զոր այս տարի Բազմավէպը գտած է իզմիրի մէջ, բաժանորդներու դիւրութեան համար առանձին գործակալութիւն մը կը հաստատէ նոյն քաղաքին մէջ՝ ներկայացնելով իբր գործակալ Բազմավէպի Պր. Ստեփան Նիկողոսեան, պատուաւոր ազգայինը :

ԽՄԲ.

ՄԵՐ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

« LA PATRIE »-ի Խմբագիր Պ. Յովհաննէս Միևասեանի՝ որ դրեց մատենադարանն այն թերթին 1908 - 1909 - 1910 ի ամբողջական հասարակութեանը երկու կազմեալ հատորներով :

Ի դիմաց Հիկկն Բաժնի
Մտնդրն.ի վանացս

Հ. Դ. ՏԱՅԵԱՆ